



Եվրասիա համագործակցություն հիմնադրամի «Արտահայտման ազատություն» ծրագիր

Խորհրդակցություն նվիրված արտահայտման ազատության խնդիրներին

Ծաղկաձոր,
հունվարի 30 - փետրվարի 1, 2009թ.,

Ձեկույց

Հունվարի 30-ից փետրվարի 1-ը Եվրասիա համագործակցություն հիմնադրամը (ԵՀՀ) կազմակերպել էր լայնածավալ խորհրդակցություն «Արտահայտման ազատություն» թեմայով՝ «Արտահայտման ազատության արմատավորումը Հայաստանում» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացնում է ԵՀՀ-ն՝ Հայաստանում Բրիտանական դեսպանատան և USAID-ի ֆինանսավորմամբ:

Խորհրդակցությունն անցկացվեց Ծաղկաձորի «Կեչառիս» հյուրանոցային համալիրում: Միջոցառմանը ներկա էին 70 մասնակիցներ, ներառյալ Հայաստանի ՁԼՍ-ների և ՀԿ-ների, երիտասարդական խմբերի և հետազոտական կենտրոնների ներկայացուցիչներ, սոցիոլոգներ, ազգագրագետներ: Քննարկման տարբեր փուլերին մասնակցեցին նաև ՀՀ բարձրաստիճան պաշտոնյաներ: Նրանց թվում էին Ազգային ժողովի պատգամավորներ, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի և Սահմանադրական դատարանի ներկայացուցիչներ, Մշակույթի և երիտասարդության հարցերով նախարարի տեղակալը, Արտաքին գործերի և Սփյուռքի նախարարությունների պաշտոնյաներ, ինչպես նաև Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի նախագահի տեղակալը:

Եվրասիա համագործակցություն հիմնադրամն այս խորհրդակցությունը կազմակերպել էր արտահայտման ազատության վերաբերյալ քննարկումը խթանելու և տվյալ հարցով հետաքրքրված հասարակական շերտերի ընկալումները բացահայտելու նպատակով: Խորհրդակցությունը միտված էր.

- ստեղծել բարենպաստ միջավայր տարբեր բնագավառների մասնագետների համագործակցության և փոխըմբռնման համար,
- կազմել գործողությունների ծրագիր և ներկայացնել առաջարկություններ՝ արտահայտման ազատության արմատավորման նպատակով:

Մասնակիցները քննարկեցին մի շարք խնդիրներ՝ կապված Հայաստանում արտահայտման ազատության ընկալման հետ: Հայաստանում արտահայտման ազատությունը չի ընկալվում որպես մարդու հիմնարար իրավունք, որի համար քաղաքացիները պետք է պայքարեն:

Միջոցառման մեթոդաբանությունը հիմնված էր «գործարար խաղերի», «ֆոկլուս խմբերի» և ռազմավարական պլանավորման վրա: Մասնակիցները կարծիքներ փոխանակեցին և խնդիրները հստակեցրին երեք օրվա ընթացքում:

Խորհրդակցության մասնակիցները բաժանվեցին թեմատիկ խմբերի և քննարկեցին արտահայտման ազատության վերաբերյալ հետևյալ յոթ թեմաները:

1. Ազատություն և հասարակություն
2. Ազատություն և պետություն
3. Օրենքներ գրված և չգրված
4. Ազատության ռեսուրսներ
5. Արտահայտման ազատություն և ՁԼՄ-ներ
6. Արտահայտման ազատություն և քաղաքային մշակույթ
7. Եկրանային արվեստներ և ազատություն

Խմբային քննարկումները վարում էին ԵՀՀ տնօրեն Գևորգ Տեր-Գաբրիելյանը, Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոնի նախագահ Դավիթ Յովհաննիսյանը, ԵՊՀ դասախոս Նունե Դիլանյանը, ԵՀՀ Եվրոպական ինտեգրման ծրագրի ղեկավար Միքայել Յովհաննիսյանը, «Ինտերնյուզ» ՀԿ գործադիր տնօրեն Նունե Սարգսյանը, «Իզմիրյան» հիմնադրամի գործադիր տնօրեն Արա Համազասպյանը և Երևանի մամուլի ակումբի նախագահ Բորիս Նավասարդյանը:

«Արտահայտման ազատությունը և Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը» թեմայով կողմնորոշիչ զեկուցումով հանդես եկավ ՀՀ Սահմանադրական դատարանի աշխատակազմի իրավախորհրդատվական ծառայության միջազգային պայմանագրերի բաժնի վարիչ Վլադիմիր Վարդանյանը: Իր խոսքում պարոն Վարդանյանը կարևորեց Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխան լինելը արտահայտման ազատության վերաբերյալ միջազգային իրավական նորմերին: Նա նաև առանձնացրեց ՀՀ օրենսդրության այն հատվածները, որոնք կարող են բաց լինել տարբեր մեկնաբանությունների համար և, հետևապես, հանգեցնել մարդու իրավունքների և ազատությունների, ներառյալ արտահայտման ազատության ոտնահարմանը: Ըստ զեկուցողի՝ ՀՀ օրենսդրության որոշ դրույթներ պետք է հստակեցվեն՝ իրավական որոշակիությունն ապահովելու համար, իսկ դատական և գործադիր իշխանությունները պետք է երաշխավորեն օրենսդրական դրույթների միատեսակ և չհակասող մեկնաբանությունը՝ հաշվի առնելով ոչ միայն օրենքի առանձին ձևակերպումների բովանդակությունը, այլ նաև դրա ոգին և ընդունման նպատակները: Երևանի մամուլի ակումբի նախագահ Բորիս Նավասարդյանը խոսեց Հայաստանում խոսքի և լրատվամիջոցների ազատության մասին, իսկ ԵՊՀ դասախոս Նունե Դիլանյանը ներկայացրեց «Մշակութային շրջապատություններ և տեղեկատվության հոսքերը» զեկույցը (հիմնվելով Աբրահամ Մոլի տեսության վրա)¹:

Խորհրդակցության առաջին և երկրորդ օրերին մասնակիցները խմբերում քննարկեցին արտահայտման ազատության ռեսուրսներին և խոչընդոտներին վերաբերող խնդիրներ, երեկոյան ներկայացնելով քննարկումների արդյունքները:

¹ http://www.speedylook.com/Abraham_Moles.html

Մասնակիցներն ընդգծեցին մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ խոչընդոտներ որոնք պետք է հաղթահարվեն Հայաստանում արտահայտման ազատությունը ապահովելու նպատակով: Այդ խոչընդոտների թվում են.

- Չկարգավորված կոնֆլիկտները հարևան երկրների հետ,
- Տեղեկատվության պակասը կամ բացակայությունը, ինչպես նաև տեղեկատվական հոսքերի սահմանափակումը,
- Գրաքննությունը, ինքնագրաքննությունը և իրապես անկախ և անկողմնակալ հեռուստատալիքների բացակայությունը,
- Արտահայտման ազատության իմաստի արժեզրկումը,
- Աղքատության մշակույթը,
- Հասարակական տաբուները,
- Անհանդուրժողականությունը,
- Համապատասխան օրենքների թերություններն ու դրանց կիրառումը, ինչպես նաև օրենքի գերակայության բացակայությունն ընդհանրապես,
- Տնտեսական գործոնները, ներառյալ կոռուպցիան և կաշառակերությունը,
- Տեխնոլոգիաների պակասը (օր. անբավարար ինտերնետ կապ),
- Հասարակության և մտավորականության պասիվությունը, քաղաքացիական հաստատակամության պակասն այս խնդրում,
- Կրթության խնդիրները, արհեստավարժության պակասը,
- Իրական ղեկավարման և հասարակական վստահության պակասը կամ բռնապետական կառավարումը:

Խմբերը քննարկեցին այն ռեսուրսները, որոնք, արտահայտման ազատությունը ապահովելու ճանապարհին կարող են օգտակար լինել խոչընդոտները հաղթահարելու գործում: Այնուհետև, խմբերը ներկայացրեցին հետևյալ առաջարկությունները.

Առաջարկություններ հանրությանը.

- Ավելի ընկալելի դարձնել կառավարության դերը. հասարակությունը չպետք է սպասի մինչև իշխանության գլուխ կանգնածներն անթերի դառնան, այլ պետք է համագործակցի իր ղեկավարների հետ, նույնիսկ, եթե հանրության զգալի մասը նրանց համարում է ոչ լեգիտիմ: Շարունակական երկխոսության և իր գաղափարներն արտահայտելու համար հնարավոր ուղիներ փնտրելու միջոցով հասարակությունը կարող է իրացնել իր ներուժը՝ հանուն երկրի պաշտպանության և առաջընթացի:
- Ընդլայնել համագործակցությունը հասարակության տարբեր շերտերի, տեղի և միջազգային կազմակերպությունների միջև՝ ընդհանուր ռազմավարություններ մշակելու, ընդհանուր նպատակներ սահմանելու, հանրային միջոցառումների ընթացքում արտահայտման ազատությունն ապահովելու, ինչպես նաև ժամանակակից տեխնոլոգիաները որպես այլընտրանքային միջոց օգտագործելու ճանապարհով:
- Ընդլայնել հասարակության իրավագիտակցությունը և մշակել հանրային հսկողության մեխանիզմներ:
- Ստեղծել կամ օգտվել հեռահար ուսուցման հնարավորություններից:

Առաջարկություններ կառավարությանը.

- Տարբերակել արտահայտչամիջոցները, ապաքաղաքականացնել և հասանելի դարձնել դրանք՝ նոր տեսակետներ և գաղափարներ ներառելու նպատակով: Ժամանակակից աշխարհում կառավարության կենսունակությունը կախված է նրա մրցունակությունից: Մրցունակությունն իր հերթին պահանջում է, որ կառավարությունն իրականացնի հասարակության կողմից առաջ քաշված նոր գաղափարները, ծրագրերն ու նախաձեռնությունները: Ամեն ոք պետք է հասկանա, որ լճացումից խուսափելու համար կառավարությունը պետք է գործի բաց և թափանցիկ: Առաջընթաց ապահովելու նպատակով երկրի ղեկավարները պետք է կապ ապահովեն հասարակության հետ, և, ընդամին, թույլատրեն խոսքի ազատությունը, եթե ցանկանում են մնալ կենսունակ և մրցունակ: Այլ կերպ ասած՝ տվյալ իշխանության գոյատևումը պահանջում է հարգանք արտահայտման ազատության նկատմամբ:
- Կառավարության անդամների մոտ պետք է ամրապնդել այն գաղափարը, որ արտահայտման ազատությունն անհրաժեշտ է՝ ապահովելու համար կառավարության լեգիտիմությունն ու արդյունավետությունը, քանի որ հասարակությունից մեկուսացած ղեկավարներն առավել խոցելի և անպաշտպան են արտաքին վտանգների նկատմամբ: Խոսքի ազատությունն ընդունելով որպես արժեք՝ կառավարությունը կապացուցի, որ չի վախենում քննադատված լինելուց, և, այս կերպ, կվերագտնի հասարակության վստահությունը:
- Հասարակական խորհրդակցությունների, տարբեր բնագավառներին (տնտեսական, սոցիալական և մշակութային) վերաբերող հետազոտությունների և հրատարակությունների միջոցով՝ հավաքագրել և ստանալ հասարակության արձագանքները: Կայուն երկխոսության ապահովումը կառավարության ներկայացուցիչների, հասարակական կազմակերպությունների, գործարար շրջանակների, մշակութային և լրատվական հաստատությունների ու անհատների միջև՝ կօգնի մշակել սկզբունքներ, արժեքներ և գաղափարներ, որոնք կնպաստեն հանրության առաջընթացին և երկրի մրցունակությանը:
- Արմատախիլ անել անպատժելիությունը:
- Կառավարության գործելակերպում ապահովել առավելագույն թափանցիկություն:
- Աջակցել համացանցն (internet) ավելի հասանելի դարձնելու խնդրում:
- Նպաստել այլընտրանքային լրատվամիջոցների ստեղծմանը:

Խորհրդակցության մասնակիցներն առաջարկեցին մի շարք թեմաներ հեռուստաքննարկումների և վավերագրական ֆիլմերի համար.

- Կրթության և արտահայտման ազատության հետ կապված հիմնախնդիրներ,
- Չլուծված հակամարտություններ (ոչ պատերազմ, ոչ խաղաղություն) և դրանց ազդեցությունը արտահայտման ազատության վրա,
- Արտահայտման ազատության կարևորությունը հասարակության առաջընթացի համար,
- Արտահայտման ազատության պակասը ամենօրյա կյանքում,
- Չանգվածային լրատվամիջոցներ. արտահայտման ազատությունը ռեսուրս է, թե՞ խոչընդոտ,
- Լրագրության վարպետություն և էթիկա,

- Տուժած լրագրողներ. լրագրողը և ոստիկանը:

Միջոցառման մասնակիցներից քանակական տեղեկություններ և որակական արձագանք ստանալու նպատակով Եվրասիա համագործակցություն հիմնադրամի ներկայացուցիչները մասնակիցներին բաժանեցին հարցաթերթիկներ, որոնց արդյունքներն ուսումնասիրեց և վերլուծեց ԵՀՀ հետազոտող Գայանե Ղազարյանը: Այլ առաջարկությունների շարքում՝ լրացուցիչ հանրային խորհրդակցությունների և քննարկումների թեմաները ներառում էին.

- Արտահայտման ազատության երկարաժամկետ ռեսուրսների մշակման հնարավորություններ,
- Արտահայտման ազատություն և հասարակական գիտակցություն,
- Քաղաքացիական դիրքորոշում. էությունն ու բաղադրիչները,
- Արտահայտման ազատություն և անհատ, ներքին ազատություն,
- Պետություն և հանդուրժողականություն: